առանց «Թագուհի» կոչման։ Աւելի ուշ ՁԺԸ (=1269) թուին «Թաիկ թագոհի դուստր Շարապշահին» տալիս է Հոռոմոսի վանքին «զԱբէլի ակն որ ի Դվնա դռանն (Անիում) զոր իմ որդին Հազրպէկն ի Դարեգոյնէն գրաւկնեց ⋮ Է ⋮ Ճ ⋮ սպիտակ ⋮ Ը ⋮ Ճ ⋮ սպ ⋮ ի վերա խարճ արար որ եղաւ Ռ ⋮ Ծ ⋮ սպ ⋮ և ստանում է երկու



Պատկեր 1

պատարագ, մէկն իրեն, միւսը Հազրպէկին(1)։ Ինչո՞ւ էր նա իրեն կամ Խաւռասը նորան «Թագուհի» անուանում, պարզ չէ. հաւանօրէն հայրը կամ պապը ամուսնացած էր Կիւրիկեանների թագաւորող տան աղջիկներից մէկի հետ. հօր կողմից նա Պահլաւունի էր(1)։

Սասնայի և Թայիկի որդին էր Խաւռազ Բ. որ նոյնպէս նուիրատուութիւններ ունի ՁԺԱ. և ՁԺԵ. թուականներին նոյն Բագնայրի վանքում. առաջինը իւր անդրանկի անունով, որ դարձեալ Սասնա

(1) Ալիշան. Շիրակ. 28։

(1) Ապիրատ Պահլաւունու որդիքն էին Տէր Սարգիս եւ Թաիկի հայրը Շարափշահ. (Սարգսեան. Տեղագր. 179. 181. 185. 186։ Ալիշան. Շիրակ. 117. 120)։

(2) Սարգսեան, Տեղ. 188. 189։ Ալիշան. Շիրակ. 116։